վայրի բարելավմանն ուղղված կամ բիզնես վարկերի տոկոսադրույքների նվազեցում: Այս մարզերում վատ է նաև աշխատանքի շուկայի վիճակը: Շիրակի մարզում գործազրկության մակարդակը հավասար է 21%-ի (22 հազար մարդ), Կոտայքում՝ 21,8%-ի (24 հազար մարդ), Լոռիում՝ 12,3%-ի (13 հազար մարդ) և Տավուշում՝ 12,5%-ի (7 հազար մարդ):[1] Այսպիսով, ներդրումային ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա ստեղծել աշխատատեղեր, և գործազրկության մակարդակի նվազումը կնպաստի աղքատության մակարդակի նվազմանը:

АЛИК ТОРОСЯН

ПРОБЛЕМЫ БЕДНОСТИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

Ключевые слова: *бедность, крайняя бедность, индекс бедности, региональная структура бедности.*

Бедность является одно из основных показателей, которая характеризует экономику государства. Государства направляют все свои ресурсы для уменшения уровня бедности. Существует несколько способов для преодоления бедности, например: трансфертные программы, реализация сельскохозяйственных программ развитие внешней торговли и т.д. В Армении проблема уровня бедности выше в четырёх регионах: Ширак, Тавуш, Лори и Котайк. Государство должно напровит для уменшения уровня бедности в этих регионах.

ALIK TOROSYAN

POVERTY PROBLEMS AND WAYS TO OVERCOME IT

Key words: *poverty, extreme poverty, poverty incidence index, regional poverty structure.*

The poverty is one of the main indicators of the state's economy. States direct their own resources in order to reduce poverty level in the country. There are several ways to overcome poverty, for example targeted transfer programs, implementation of agricultural projects, development of foreign trade and etc. In Armenia the problem of poverty is big in four regions: Shirak, Tavush, Lori and Kotayk. The government should implement its main measures to reduce poverty in these regions.

ԱՆԱՀԻՏ ԺԱՄՀԱՐՅԱՆ
Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, բակալավրիատ, 3-րդ կուրս

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

Հիմնաբառեր. *ներդրում, ներդրումային միջավայր, տնտեսական աճ, գործարար միջավայր, ներդրումային ռիսկ, միջազգային ներդրումային դիրք, օտարերկրյա ուղղակի ներդրումներ*

Հոդվածում անդրադարձ է կատարվել «ներդրումներ» և «ներդրումային միջավայր» հասկացություններին, ներդրումային միջավայրի գնահատման մեթոդաբանու-

[1] http://armstat.am/file/article/marz_2017_16.pdf

թյանը: Ներկայացված է հետճգնաժամային տարիներին ՀՀ-ում ներդրումների շարժընթացը:

Ուսումնասիրելով միջազգային կազմակերպությունների գնահատականները՝ բացահայտվել է, որ ՀՀ-ն ներդրումային միջավայրի գրավչության տեսանկյունից բարելավել է իր դիրքերը, սակայն միևնույն ժամանակ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2008 թվականից նվազման միտում է դրսևորում:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը ՀՀ Կառավարության ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և դիտարկվում է որպես տնտեսական զարգացման կարևորագույն միջոցներից մեկը: Հետազոտվող հիմնախնդրի կարևորությունը պայմանավորված է ներդրումային բարենպաստ միջավայրի և կայուն զարգացման ու տնտեսական աճի սերտ փոխկապվածությամբ: ՀՀ-ում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը անհրաժեշտ է տնտեսական անվտանգությանն ուղղված արտաքին և ներքին մարտահրավերներին պատշաճ դիմակայելու և ազգային տնտեսությունը մրցունակ դարձնելու համար:

Սինգապուրի «տնտեսական հրաշքը» օրինակ է՝ եզրակացնելու, որ երկրի բարգավաճման հիմնաքարը նախևառաջ գրագետ տնտեսական քաղաքականությունն է, որով շեշտադրվել է հատկապես բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը, օտարերկրյա ներդրումների խթանումը, ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, փոքր ու միջին բիզնեսի նկատմամբ պետական հոգածությունը և այլն: Կարծում ենք, որ ՀՀ-ն, ստեղծելով ներդրումային բարենպաստ միջավայր, կարող է ապահովել տնտեսական զարգացում:

Տնտեսագետներն իրենց աշխատություններում հաճախ են անդրադարձել «ներդրումային միջավայր» և «ներդրումներ» հասկացությունների սահմանմանը: Ա. Մարշալը ներդրում է համարում բոլոր այն ծախսերը, որոնք ապագայում կապահովեն շահույթ և կնպաստեն կապիտալի մեծացմանը:[1] Ըստ Ու. Շարփի՝ ներդրումը, ավելի լայն իմաստով, նշանակում է այսօր բաժանվել փողից՝ ապագայում ավելի մեծ գումար ստանալու համար:[2] Համաշխարհային բանկը ներդրումային միջավայրը սահմանում է որպես ինստիտուցիոնալ, քաղաքական և կարգավորիչ միջավայր, որում գործունեություն են ծավալում ֆիրմաները:[3]

Բանավեճ է ծավալվում այն հարցի շուրջ, թե ներդրումային և գործարար միջավայրերից որն է որից ածանցյալ, քանի որ սրանք գտնվում են սերտ փոխկապվածության մեջ: Հաճախ ներդրումային և գործարար միջավայրերը նույնացվում են: Սակայն կարծում ենք, որ այն ավելի լայն հասկացություն է և ներառում է գործարար միջավայրը: Ներդրումային միջավայրի բարելավման համատեքստում կարևորվում է նաև գործարար միջավայրի բարելավումը:

Տնտեսագիտական գրականությունում առկա «ներդրումային միջավայր» հասկացության վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումների քննական մեկնաբանմամբ բացահայտել ենք, որ այն համալիր հասկացություն է և բնո-

---

[1] Տե՛ս Маршалл А., Принцыпи политической экономики, том 2, Москва, “Прогресс”, 1984, էջ 36-47:

[2] Տե՛ս Шарп У.Ф., Александер Г.Дж., Бейли Дж.В., Инвестиции, Москва, “ИНДРА_М”, 2001, էջ 1:

[3] Տե՛ս World Development Report 2005. A better investment climate for everyone, The World Bank and Oxford University Press, New York, 2005, էջ 1-2:

որոշվում է որպես կոնկրետ երկրում, տարածաշրջանում, տնտեսությունում կամ կազմակերպությունում ներդրումային կապիտալի ներգրավման նպատակ հետապնդող մի շարք պայմանների, գործոնների ու միջոցառումների ամբողջություն և ազգային անվտանգությանն առնչվող ցուցանիշների համակարգ, որը որոշում է ներդրողի ներդրումային վարքի և վարվելակերպի նախընտրելիության ոլորտը:[1] Երկրի գործարար և ներդրումային միջավայրերը կարևոր գործոն են օտարերկրյա ներդրումների ներգրավման և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման համար, ընդ որում՝ անդրազգային կորպորացիաները նախընտրում են ներդրումներ կատարել առողջ գործարար միջավայր ունեցող երկրների ընկերություններում, որտեղ նվազագույնի են հասցված ծգձգումները, ռիսկերը, գների մակարդակը: Կարելի է առանձնացնել ներդրումային միջավայրի գնահատման երեք առավել բնութագրական մոտեցումներ՝ նեղ, գործոնային և ռիսկային:[2]

Նեղ մոտեցումը հիմնվում է ՀՆԱ-ի, ազգային եկամտի շարժընթացի և արդյունաբերական արտադրանքի ծավալների գնահատականի, ազգային եկամտի բաշխման շարժընթացի և սպառման ու խնայողությունների համամասնության, սեփականաշնորհման, ներդրումային գործընթացների օրենսդրական կարգավորման, ինչպես նաև առանձին ներդրումային շուկաների զարգացման գնահատականների վրա: *Գործոնային մոտեցման* էությունը խոշորացված խմբերի ձևավորումն է, որոնք առաջանում են իմաստով մոտ ցուցանիշներից՝ գործոններից: *Ռիսկային մոտեցման* կողմնակիցները ներդրումային միջավայրի բաղկացուցիչներ են դիտարկում ներդրումային ներուժը և ներդրումային ռիսկերը:

Նշենք, որ մեթոդաբանական պահանջներին առավել համապատասխանում է ներդրումային միջավայրի գնահատման գործոնային մեթոդը: Ներդրումային միջավայրի վրա ազդում են ժողովրդագրական, տնտեսական, աշխարհագրական, սոցիալական և մշակութային, քաղաքական, օրենսդրական գործոնները և տեխնոլոգիական փոփոխությունները: ՀՀ-ում ներդրումային միջավայրի վրա առավել մեծ ազդեցություն ունեն ժողովրդագրական, աշխարհագրական և քաղաքական գործոնները:

ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում տնտեսական զարգացման ռազմավարությունը մշակելիս մեծ ուշադրություն է դարձվել ներդրումային միջավայրի բարելավմանը:[3] Ծրագրում ներկայացված նպատակների իրականացման համար մշակվել և ՀՀ Կառավարության կողմից 2015 թ. հոկտեմբերի 8-ին հավանության է արժանացել ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգն ու դրանից բխող միջոցառումների ժամանակացույցը:[4] Ըստ այդ հայեցակարգի՝ ՀՀ Կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների

---

[1] Տե՛ս Մելքումյան Մ.Ս., Բիզնեսի էկոնոմիկա, Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 28:

[2] Տե՛ս Фоломьев А.Н., Ревазов В.Г., Инвестиционный климат регионов России и пути его улучшения. Вопросы экономики.-1999, Н9, էջ 57-68:

[3] ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված:

[4] ՀՀ Կառավարության 2015 թ. հոկտեմբերի 8-ի N 45 որոշման հավելված:

պատշաճ պաշտպանության ու միջազգային առաջադեմ փորձում ընդունված այլ սկզբունքներով:

Ներդրումային ոլորտում բարեփոխումների ծրագրերի մշակման և իրագործման նպատակով 2016 թ. դեկտեմբերի 22-ին ընդունված որոշմամբ ՀՀ Կառավարությունը հիմնադրել է Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնը:[1] Այս գործընթացի հիմնական նպատակն է դեպի Հայաստան կայուն և երկարաժամկետ օտարերկրյա ներդրումների ներգրավումը և հայաստանյան արտահանման ծավալի աճը:

Մինչև 2008 թ. արձանագրված ներդրումների աճին հաջորդել է ներդրումների կտրուկ անկումը 2009 թ. ճգնաժամի ընթացքում, իսկ հետագայում դրսևորվել է անկայուն շարժընթաց: 2002-2008 թթ. ներքին ներդրումների ծավալը տարեցտարի ավելացել է՝ 2008 թ. կազմելով ՀՆԱ շուրջ 40%-ը: Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2008-2017 թթ. դրսևորել է շարունակական նվազման միտում, և արդյունքում ցուցանիշը 2016 թ. կազմել է ընդամենը ՀՆԱ 18,4%-ը: 2017 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների կտրվածքով այս ցուցանիշը կազմել է 15,8%:

***Գծապատկեր** 1. **Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը** 2008-2016 **թթ**.[2] (%)*

Ստեղծված իրավիճակը շատ մտահոգիչ է, ՀՀ տնտեսության համար կենսական նշանակություն ունի ներդրումների խթանման նոր կառուցակարգերի և գործիքների մշակումը, դրանց համապատասխանեցումը մեր տնտեսության առանձնահատկություններին: Խիստ կարևորվում է այն հանգամանքը, որ վերոնշյալ միջոցառումները համահունչ լինեն այլ ոլորտներում իրականացվող քաղաքականություններին, քանզի ներդրումային քաղաքականությունը խիստ զգայուն է և կրում է մի շարք ազդեցություններ, որոնցից են՝ առևտրային քաղաքականություն, մրցակցություն, հարկային քաղաքականություն:

2017 թ. միջազգային հեղինակավոր կազմակերպության կողմից տրված գնահատականների համաձայն՝ Հայաստանը բարելավել է իր դիրքերը: Այսպես օրինակ, հեղինակավոր Doing business-ի գնահատականներով՝ մեր երկիրը բարելավել է իր դիրքերը միանգամից 8 կետով՝ 189 երկրների շար-

[1] ՀՀ Կառավարության 2016 թ. դեկտեմբերի 22-ի,1342 Ա որոշում:

[2] Տե՛ս ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային) http://www.minfin.am/hy/page/_hy_chart_/:

քում 2016 թ. 43-րդ հորիզոնականից 2017 թ. բարձրանալով 35-րդ: Ընդ որում, առաջընթացը հիմնականում պայմանավորված է եղել վարկ ստանալու ցուցանիշի՝ 42-րդ հորիզոնականից 20-րդ և էլեկտրաէներգիա ստանալու ու պայմանագրերի կիրառման ցուցանիշների բարելավմամբ՝ համապատասխանաբար 85-ից 76-րդ և 35-ից 28-րդ հորիզոնական:[1] Մեր հարևան Վրաստանը իր դիրքերը բարելավել է 7 կետով՝ զբաղեցնելով 16-րդ հորիզոնականը:



Գծապատկեր 2. *«**Գործարարությամբ զբաղվելու**» (Doing Business) **հարմարավետության վարկանիշը ՀՀ-ի համար** 2016 **և** 2017 **թթ.***

Համաշխարհային տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության զեկույցում, որտեղ ներկայացված են 137 երկրների ցուցանիշներ, ՀՀ-ն զբաղեցնում է 73-րդ տեղը: Այս դիրքը ձևավորվում է 12 խումբ ցուցանիշներից, որոնցից ՀՀ-ում միջինից ցածր դիրքում են գտնվում մակրոտնտեսական միջավայրը (101-րդ դիրք), շուկայի չափը (115-րդ դիրք) և ենթակառուցվածքները (80-րդ դիրք): Ցուցանիշի ձևավորման վրա բացասական ազդեցություն են թողնում ֆինանսական միջոցների հասանելիությունը, հարկերի դրույքաչափերը, կոռուպցիան բնութագրող ցուցանիշները, ինչպես նաև կառավարական բյուրոկրատիայի ոչ բարվոք ցուցանիշը:[2]

Աղյուսակ 1-ի տվյալները փաստում են, որ 2010-2016 թթ. ՀՀ զուտ ներդրումային դիրքը եղել է բացասական մեծություն, ինչը նշանակում, որ մեր հանրապետությունը բնորոշվում է որպես ներդրումներ ընդունող երկիր: Այսպես, ՀՀ զուտ միջազգային ներդրումային դիրքը 2016 թ., 2015 թ. համեմատ, ավելացել է 5,6%-ով: Նույն թվականներին ուղղակի ներդրումներն ավելացել են 6,8%-ով, ինչը այդքան էլ բարձր ցուցանիշ չէ: Ներդրումներն աճում են դանդաղ տեմպերով:

ՀՀ ներդրումային դիրքի վերը թվարկված ցուցանիշների բարելավումը կապված է ՀՀ-ի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելու հետ: Այդ անդամակցության արդյունքում դյուրինացավ մուտքը դեպի ԵԱՏՄ անդամ-պետությունների շու-

[1] Տե՛ս Doing Business Reports 2007-2015, The World Bank, http://www.doingbusiness.org:
[2] https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2017-2018

կաներ, իսկ ինչպես գիտենք, ՀՀ-ի զարգացումը խոչընդոտող մեծ արգելք է փոքր շուկան, որը նվազեցնում է ներդրումային միջավայրի գրավչությունը:

Աղյուսակ 1

ՀՀ միջազգային ներդրումային դիրքը** 2008-2016 **թթ. [1]

(մլն ԱՄՆ դոլար)	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
ԶՈՒՏ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔ	-6902.45	-7903.78	-8020.57	-8929.75	-7781.3	-7931.0	-8375.9
Ակտիվներ	3193.32	3874.61	3997.82	4345.57	4005.09	4403.53	5202.25
Ուղղակի ներդրումներ արտերկիր	121,61	337.18	352.69	292.70	310.77	495.85	567.99
Պորտֆելային ներդրումներ	13.85	12.88	14.01	19.35	19.16	41.85	65.06
Այլ ներդրումներ	1191.99	1592.12	1831.24	1781.40	2181.55	2089.07	2363.11
Պարտավորություններ	10095.7	11778.3	12017.7	13275.3	11786.4	12334.5	13578.1
Ուղղակի ներդրումներ արտերկրից	4404.73	5241.23	5287.21	5524.43	4211.27	4338.07	4634.84
Պորտֆելային ներդրումներ	42.64	26.63	34.43	725.89	691.43	928.38	1068.15
Այլ ներդրումներ	5648.40	6510.52	6693.60	7088.02	6834.8	7065.92	7869.96

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ տնտեսական աճի կարգավորման գործընթացում ՀՀ Կառավարությունը, կարևորելով ներդրումային միջավայրի բարելավման դերը, ձեռնամուխ է եղել այդ ուղղությամբ հստակ միջոցառումների իրականացմանը, այն է. մշակվել են ծրագրեր, ընդունվել են հայեցակարգեր և հիմնվել է Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն:

Բերված ցուցանիշները վկայում են, որ ներդրումային ու ձեռնարկատիրական միջավայրում էական փոփոխություններ չեն եղել: Զարգացումն ընթանում է դանդաղ տեմպերով, ինչը մեր երկիրը դարձնում է պակաս մրցունակ հարևան երկրների հանդեպ: Այս առումով, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ներդրողներին այնպիսի աննախադեպ պայմաններ առաջարկելու ուղղությամբ, որոնք կչեզոքացնեն ինչպես հարևան, այնպես էլ տարածաշրջանի այլ երկրների առանձին ցուցանիշների առավելությունները՝ ՀՀ ներդրումային միջավայրը դարձնելով գրավիչ և մրցունակ:

ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդրի ուսումնասիրությունը և հետազոտությունը թույլ են տալիս կատարել մի շարք եզրակացություններ:

Այսպիսով, ներդրումային միջավայրը տնտեսության ինստիտուցիոնալ համակարգում առանձնահատուկ ենթահամակարգ է, այն բնութագրում է այս կամ այն երկրում ներդրումների նկատմամբ ձևավորված իրավիճակը:

ՀՀ Կառավարությունը ներդրումային քաղաքականությունը դիտարկում է որպես տնտեսական զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը, կարևորում է մասնավոր ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավումը:

Ինտեգրացիոն կառույցներում երկրի ներառումը բնականաբար ազդում է ներդրումային և բիզնես միջավայրի վրա, քանի որ տեղի են ունենում

[1] Տե՛ս ՀՀ միջազգային ներդրումային դիրքը, տարեկան, ՀՀ ԿԲ պաշտոնական կայք-էջ՝ https://www.cba.am/am/sitepages/statexternalsector.aspx:

օրենսդրական, քաղաքական, հարկային և կարգավորիչ փոփոխություններ: Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների գնահատմամբ՝ ՀՀ-ն բարելավել է իր դիրքերը, սակայն զարգացումն ընթանում է դանդաղ, ինչը մեր երկիրը դարձնում է հարևան երկրներից պակաս մրցունակ:

Ներդրումային ոլորտին առնչվող օրենքներում պետք են միջամտություններ, մասնավորապես՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» և «Ազատ տնտեսական գոտիների» մասին ՀՀ օրենքների վերանայում և իրավական այլ ակտերի մշակում:

ՀՀ ներդրումային միջավայրի գլխավոր խնդիրներից է ՀՀ փոքր շուկան: Բիզնես միջավայրը բարելավելու համար անհրաժեշտ է մեծ շուկա, իսկ ԵԱՏՄ-ն մեծ շուկա է: Ուստի, օգտվելով ԵԱՏՄ-ի կողմից ընձեռվող հնարավորություններից, անհրաժեշտ է մեծացնել ՀՀ-ից արտահանման ծավալները: ՀՀ-ն ՏՏ ոլորտում հայտնի է մարդկային կապիտալի բարձր մակարդակով, հետևաբար պետք է խոշոր ներդրումներ կատարել ՀՀ-ում և ԵԱՏՄ-ում, ստեղծել նոր աշխատատեղեր, որպեսզի կանխվի «ուղեղների արտահոսք»-ը դեպի այլ երկրներ: Քանի որ ԵԱՏՄ-ն թույլ է տալիս առանց մաքսատուրքի ապրանք ներմուծել ԵԱՏՄ տարածքից, ապա կարող ենք ավելի մատչելի կերպով ներկրել առաջադեմ տեխնոլոգիաներ, ժամանակակից հաստոցներ և դրանով բարելավել ներդրումային միջավայրը:

АНАИТ ЖАМГАРЯН

МЕХАНИЗМЫ УЛУЧШЕНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ АРМЕНИИ

Ключевые слова: *инвестиции, инвестиционная среда, экономический рост, бизнес-среда, инвестиционный риск, международная инвестиционная позиция, прямые иностранные инвестиции.*

В статье мы упомянули концепцию инвестиционной и инвестиционной среды, методологию оценки инвестиционной среды. Предоставили изменения динамики инвестиций в Армении в посткризисные годы.

Изучив тенденции международных организаций, выяснилось, что Армения улучшила свои позиции с точки зрения привлекательности инвестиционной среды, но в то же время отношение инвестиций / ВВП снижается с 2008 года.

ANAHIT ZHAMHARYAN

ARMENIA'S INVESTMENT ENVIRONMENT IMPROVEMENT MECHANISMS

Key words: *investment, investment environment, economic growth, business environment, investment risk, international investment position, foreign direct investment.*

In the article we referred to the concept of investment, investment environment, and also to the assessment methology of it. We have presented changes in the dynamics of investment in Armenia in post-crisis years.

Having examined the trends of international organizations, it has been revealed that Armenia has improved its position in terms of attractiveness of the investment environment, but at the same time, the ratio of Investing / GDP to tendency has been decreasing since 2008.